26.318

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք!

Հայկ. Խ Ս Հ.—Ս. Ա. Ժ. Կ.
Հատմկոսպմիության կենտր. վարչություն

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

(Ա Ր Տ Ե Լ)

Հրատարակություն Հաշմկոսպմիության կենտ. վարչության

Սար Բայազետի շրջգործկոմի տպարան

1939

334.6
Հ-32

05 JAN 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք!

Հայկ. Խ Ս Հ.—Ս. Ռ. Ժ. Կ.
Հաշմկոոպմիության կենտր. վարչություն

334.6 ԱՆ
Հ-32

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

(Ա Ր Տ Ե Լ)

Հրատարակություն Հաշմկոոպմիության
կենտ. վարչության

Նոր Բայազետի շրջգործկոմի տպարան

1939

06.06.2013

26.318

Գլավլիտի լիազոր
№ 800
Տիրաժ 2000 օրինակ

ՀԱՅԿ-ԿՕՐ
Ս. Ա. Մոսինյանի
անվան գրադարան

5015
31

Հաստատում եմ
Հայկ. ԽՍՀ Սոցապժողկոմ
Զ. ԳԱԼՍՏՅԱՆ
28 փետրվարի 1939 թիվ

ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ՆՊԱՏԱԿԸ ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդված 1. ..... քաղաքի (գյուղի) հաշմանդամները կամովին միանում են, կազմելով հաշմանդամների առևտրական արտել (անվամբ) ..... վորպեսզի ինքնագործունեության սկզբունքներով աշխատանքի կազմակերպման միջոցով ոգտագործեն իրենց աշխատանքը սոցիալիստական շինարարության մեջ, վորով աջակցեն ժողովրդական տնտեսության ընդհանուր բարձրացման գործին և միաժամանակ բարելավեն իրենց նյութական դրությունը և բարձրացնեն կուլտուրական մակարդակը։

Արտելի գործունեությունը (կոոպերացման շրջան) տարածվում է .....

Արտելը նպատակ է դնում կազմակերպել և զարգացնել արհեստագործությունը, ամեն կերպ

ընդարձակելով լայն սպառման բարձրորակ առարկաների արտադրողականությունը և աշխատավորության կարիքների լավագույն սպասարկումը (առևտրական արտելի համար) կատարել հաշմանդամների արտելներից, համայնացված սեկտորի այլ ձեռնարկություններից և անձնական արտադրող՝ տնայնագործներից, կոլխոզնիկներից ու աշխատավոր մենատնտեսներից ձեռք բերված ապրանքների հատավաճառ և մանրածախ առևտուր (աշխատանքային արտելի համար) իր անդամների աշխատանքով համայնացրված սեկտորի կազմակերպություններին և ձեռնարկություններին, այլ և բնակչությանը զանազան ծառայություններ մատուցանել (տրնտ. արտելների համար) կազմակերպել իր անդամների աշխատանքը գյուղատնտեսության ոժանդակ ճյուղերում (բանջարաբուծության, այգեգործության, մանր անասնապահության և այլն և նրա հետ կապված արհեստագործություններում ոգտագործելով արտադրած մթերքները և հումայթը առաջին հերթին իր անդամներին և հաշմանդամների կոոպերացիայի ձեռնարկություններին մատակարարելու համար։

Հոդված 2.—Արտելի ձեռնարկությունները իրենց շենքերով, սարքավորումով, կենդանի և մեռյալ ինվենտարով, արտադրանքով, հումայթով և այլ նյութական արժեքներով միասին

կազմում են արտելի հասարակական-սոցիալիստական սեփականությունը և չեն կարող հանվել արտելի սեփականությունից առանց անդամների ընդհանուր ժողովի համաձայնության կամ ՀԽՍՀ կառավարության վորոշման։

2. ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 3.— Արտելը պարտավորվում է իր գործունեությունը տանել բանվորագյուղացիական կառավարության կողմից հաշմանդամների կոոպերացիայի սիստեմայի համար սահմանված ընդհանուր պլանի համաձայն, արտելի ընդհանուր ժողովի ընդունած և Հաշմկոոպմիության հաստատած պլանով։

Հոդված 4.—Արտելի աշխատանքը (արհեստագործությունը) կատարվում է արտելի թե կոլեկտիվ ձեռնարկություններում (ընդհանուր արհեստանոցներում և այլն) և թե արտելի անդամների տներում, այլ և արտելի պատվերով նրա առանձին անդամների միջոցով՝ փողոցներում, շուկաներում, վաճառանոցներում և այլն։

Արտադրանքի մշակումն արագացնելու և նրա վորակը լավացնելու նպատակով արտելը ոգնում է տանն աշխատող իր անդամներին, կազմակերպելով նրանց համար ձևելու, սղոցելու, ներկելու և հավաքող արհեստանոցներում վերամշակման յենթակա առանձին գետաղների (մասերը) պատրաստելու արհեստանոցներ և այլն։

Նանեբուրյուն.— Տանն աշխատող արտելի անդամներին պատկանող սարքավորման և գործիքների ամորտիզացիայի (մաշվածության) կարգը վորոշում է արտելի անդամների ընդհանուր ժողովը։

Հոդված 5.— Արտելի վարչությունը և անդամները պարտավոր են՝

ա) Ամեն կերպ աշխատել ավելացնել լայն գործածության և սպառման իրերի արտադրանքը բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, լրիվ չափով ոգտագործելով արտելի ձեռնարկությունների շենքերն ու սարքավորումները, կատարել և կերակատարել նոր տեխնիկական նորմաներն ու արտադրանքի նորմաները, միջոցներ ձեռք առնել արտադրության հետագա մասնագիտացման և մեքենայացման համար ու անցկացնել սոցիալիստական ռացիոնալացում. ամեն կերպ աջակցել գյուղատնտեսությանը և ամրացնել այն արտելի արտադրության մեջ, յուրացնել լայն գործունեության իրերի խորհրդային ու արտասահմանյան տեսակներն ու ձևերը, ստեղծել արտադրության մեջ կուլտուրական պայմաններ, անցկացնելով սանիտարական, առողջապահական և տեխնիկայի անվտանգության միջոցառումներ, ամենալավ ձևով կազմակերպելով աշխատանքը, անցկացնել և ամրացնել աշխատանքի սոցիալիստական կազմակերպումն արտելի անդամների ինքնագործունեության հիմունքներով, կազմակերպելով արտադրական խորհրդակցություններ, իր անդամների մեջ ամենալայն չափերով ծավալել ստախանովյան շարժումը, սոցիալիստական մրցումը և հարվածայնությունը, մոբիլիզացիայի յենթարկել նրանց (անդամներին) արտֆինպլանները կատարման և գերակատարման համար։

բ) Վճռական պայքար մղել արտադրանքի վորակի բարձրացման և մշակման գեղեցկության համար, գործվածքների խոտանի լիակատար վերացման և խոտանագիտությունը կանոնավոր հիմքերի վրա դնելու համար։ Արտադրանքի նշանում (մարկիրովկա) կատարել. ընդարձակել և լավացնել գործվածքների ասորտիմենտը (տեսակները), համաձայնեցնելով այն առևտրական կազմակերպությունների հետ և հարմարեցնելով գնորդ աշխատավորության պահանջներին։

գ) Արտելի գործունեությունը կազմակերպել խիստ տնտեսավարական հաշվարկի հիմունքներով. ձգտել վերացնելու կորուստները արտադրության մեջ, նվազեցնելու ծախսերը, մասնավորապես վարչատնտեսական ծախսերը, իջեցնելու արտելի գործվածքների բաց թողման գների ինքնարժեքը և բարձրացնելու արտելի շահավետությունը։

դ) Ամեն կերպ ծավալել ինքնամթերումը

և տեղական հումույթի ոգտագործումը, լավացնել հումույթի մշակումը և այն խնայողաբար ծախսել, վորոնել հումույթի տեսակների և կիսաֆաբրիկատների նոր աղբյուրներ, լայնորեն ոգտագործել արտադրության տականքները, թափթփուկները, խոտանը, ուտիլը։

յե) Բարձրացնել արտելի անդամների աշխատանքային վորակը և կուլտուր-տեխնիկական մակարդակը, անդամների կողմից տեխմինիմումը յուրացնելու միջոցով, արտելի անդամներից պատրաստել բրիգադավարներ, վարպետներ, տեխնիկներ և այլ բարձրորակ աշխատավորներ, պատրաստել նոր կադրեր, կազմակերպելով ուսմանակցելով դասընթացքներին, բրիգադային դպրոցներ և անհատական աշակերտություն ստեղծելու գործում։

զ) Բարձրացնել անդամների կուլտուր-տեխնիկական մակարդակը, տարածել լրագրեր, գրքեր, ռադիո, կինո, կազմակերպել ակումբներ, գրադարաններ, ընթերցարաններ, կարմիր անկյուններ, ամրացնել անդամների ձեռք բերած գիտությունները։

ե) Նպաստել արտելի անդամների և նրանց ընտանիքների բնակ-կենցաղային պայմանների լավացմանը, կազմակերպելով հասարակական ճաշարաններ, մսուրներ, բաղնիքներ և այլն։

ը) Ներգրավել արտելում բոլոր այն հաշ-

մանդամներին և անձանց, վորոնք յենթակա յեն կոոպերացման և բնակվում են արտելի գործունեության շրջանում։

թ) Աջակցել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը արտելի անդամների և ծառայողների, այլև նրանց ընտանիքների անդամների մեջ աշխատանքի և յերկրի պաշտպանության համար։

ժ) Արտելի անդամներին իրավաբանական ոգնություն ցույց տալ և նրանց շահերը պաշտպանել դատական և այլ հիմնարկներում։

Հոդված 6.— Արտելի կանոնադրությունը սոցիալական ապահովության ծողկոմատում հաստատելուց և պետական տոմարագրման մարմնի կողմից տոմարագրելուց հետո, արտելը պարտավոր է անհապաղ մտնել վորպես անդամ Հաշվկոոպմիության մեջ։

Հաշմանդամների կոոպերացիայի սիստեմայի զեկավարող մարմինների բոլոր վորոշումներն ու ցուցումները աշխատանքի ընդհանուր ուղղության, կազմակերպչական և արտադրական միջոցառումների, պլանավորման, հաշվառման և հաշվետվության բնագավառում պարտադիր են արտելի համար։

Միությունը ոգնություն է ցույց տալիս արտելին արտադրա-տնտեսական, ֆինանսական, մատակարարման, վաճառման, կազմակերպ-

չական, կուլտ-մասսայական գործունեության բնագավառներում, այլ և վերահսկում է արտելի ողջ աշխատանքն։

Հոդված 7.— Արտելի գործունեության վերահսկողությունը կենսագործվում է համաձայն հաշվանդամների կոոպերացիայի կանոնադրության 23-րդ կետի Սոցապծողկոմատի և հաշմկոոպխորհրդի դիրեկտիվների և ցուցումների համաձայն։

Հոդված 8.— Արտելն ինքնուրույն կերպով է տնօրինում իր միջոցներն և դույքը, համաձայն արտֆինպլանի ոգվում է բանկային վարկից, հաշվարկային և այլ հաշիվներից, կարող է պատվիրատուներից ավանդներ ստանալ և կատարել պլանային և արտապլանային շինարարություն համաձայն գոյություն ունեցող օրենքներին։

Հոդված 9.— Արտելը ձեռք է բերում սարքավորում, հումույթ և նյութեր ու վաճառում է իր արտադրանքը ըստ պայմանագրերի ինքնուրույն կերպով կամ միության միջոցով, վերջին դեպքում կնքելով նրա հետ պայմանագիր։

Տեղական բնակչությանը լայն գործածության արտադրանք մատակարարելու նպատակով արտելը կարող է իր գործվածքների հատավաճառ կազմակերպել, բացելով խանութներ, կրպակներ, շարժական կետեր և այլն։

Հոդված 10.— Արտելի արտադրական մարկան պիտի հաստատված լինի հանրագիտական Հաշմկոոպմիության կողմից։

Հոդված 11.— Արտելն ոգտվում է իրավաբանական անձի իրավունքներից և ունի իր անվան կնիքը։

3. ԱՐՏԵԼԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Հոդված 12.— Հաշմանդամների արտելի անդամ կարող են լինել հետևյալ անձինք՝

ա) Բոլոր խմբերի և կատեգորիաների հաշմանդամները, այլ և այն անձինք, վորոնց աշխատունակությունը բժշկական աշխատավորական եքսպերտ հանձնաժողովների կողմից ճանաչված են սահմանափակ, վորոնք համաձայն գործող օրենսդրության իրավունք ունեն սոցիալական ապահովություն ստանալու աշխատանքում տեղավորվելու ձևով։

բ) Պատերազմի հաշմանդամների և նրանց հավասարեցված անձանց ու աշխատանքի հաշմանդամների աշխատունակ այրիները, յեթե նրանք 18 տարեկան հասակին չհասած զավակներ ունեն, այլ և աշխատունակ այն անձինք, վորոնց խնամքի տակ են գտնվում կողմնակի ոգնության կարոտ հաշմանդամները (1-ին խմբի հաշմանդամներ)։

գ) Սոցիալական ապահովագրության կար-

գով ծերության պատճառով ապահովվող անձինք։

դ) Անհատական թոշակառուները։

յե) Ցերկարամյա աշխատանքի համար կենսաթոշակ ստացող անձինք։

զ) Սոցիալական ապահովագրության կարգով ապահովվող աշխատանքի հերոսները։

ե) Նախկին քաղտաժանակիրների և աքսորյալների ընկերության անդամները։

ը) Նախկին հին բոլշևիկների ընկերության անդամները։

թ) Աշխատունակ անձինք, վորոնք ընտրված են ընդհանուր ժողովի կողմից արտելում ղեկավարող աշխատանք տանելու համար։

Հոդված 13.—Արտել կազմակերպելու համար անհրաժեշտ են քաղաքներում 7-ից վոչ պակաս, իսկ գյուղական վայրերում 5-ից վոչ պակաս թվով հիմնադիրներ։

Չեն կարող արտելի հիմնադիրներ լինել երբ հետ ամուսնական կապերով կապված անձինք, այլ և ծնողներն ու զավակները, քույրերն ու յեղբայրները, պապերն ու թոռները։

Հոդված 14.— Արտելի անդամ ընդունելը կատարվում է ընդհանուր ժողովում կամ վերջինիս հանձնարարությամբ արտելի վարչության կողմից, ընդհանուր ժողովի հետագա հաստատմամբ։ Անդամագրվել ցանկացողը պարտավոր է ներկայացնել գրավոր դիմում, հաշմանդամների արտելին անդամագրվելու իրավունքն ապացուցող փաստաթղթեր և բժշկական աշխ. եքսպերտ հանձնաժողովի յեզրակացությունը, թե տվյալ անձն ինչպիսի աշխատանքում կարող է ոգտագործվել արտելում։ Վարչության մերժումը կարող է բողոքարկվել ընդհանուր ժողովում։

Հոդված 15.— Դիմող անձին արտելը կարող է ընդունել վորպես անդամության թեկնածու նախնական փորձառությամբ բայց 2 ամսից վոչ ավելի ժամանակով։ Արտելում թեկնածուների թիվը չի կարող արտելի անդամների թվի 20 տոկոսից ավելի լինել։

Թեկնածուները վարձու աշխատող անձանց թվերի մեջ չեն մտնում. արտելը նրանց հետ հաշիվ է տանում նույն հիմունքներով, ինչ վոր և անդամների հետ և նրանց համար ապահովագրական մուծումներ է կատարում հաշմանդամների կոոպերացիայի փոխադարձ ապահովագրության և փոխոգնության դրամարկղում։

Յեթե թեկնածուն փորձառնական շրջանն անցնելուց հետո չնդունվի և չարձակվի աշխատանքից, այդ դեպքում նա անցնում է վարձու աշխատողների շարքը։

Հոդված 16.— Արտելում վորպես աշխատող կարող են ընդունվել այն անձինք, վորոնք հաշմանդամների արտելում անդամագրվելու իրավունք ունեն։ Ուսուցման ժամանակաշրջանում աշակերտները չեն մտնում կանոնադրու-

թյան 31-րդ հոդվածով սահմանված վարձու աշխատող անձանց նորմայի մեջ։

Աշակերտների աշխատանքի պայմանները պիտի համապատասխանեն գործող օրենսդրությամբ արհեստագործական կոոպերացիայի աշակերտների համար սահմանված պայմաններին։

Հոդված 17.—Մրցամրցանակ յերկու արտելում, կամ հաշմանդամների արտելում և արհեստագործական արտելում անդամագրվելն արգելվում է։ Գյուղատնտեսական արհեստագործությամբ զբաղված արտելի անդամները կարող են և կոլխոզում անդամագրվել։

Հոդված 18.— Արտելի այն անդամները, վորոնք խախտում են կանոնադրությունը և իրենց պարտականությունները հանդեպ արտելի և գործում ի վնաս արտելի և սոցիալիստական շինարարության, յենթակա յեն արտելի կողմից վտարման։

Արտելից վտարելը կարող է կատարվել արտելի անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ, յեթե ժողովին մասնակցել են անդամների ընդհանուր թվի 2/3-ից վոչ պակաս անդամներ։ Արտելի անդամների ընդհանուր ժողովի որձանագրության մեջ անպատճառ պետք է նշվի ժողովին մասնակցող անդամների թիվը և վտարման թերու դեմ քվեարկողների թիվը։ Մինչև ընդհանուր ժողովի հրավիրելն, այդ անձինք

հեռացվում են աշխատանքից արտելի վարչության կարգադրությամբ։

Յեթե ընդհանուր ժողովն արտելի վարչության կարգադրությունը տվյալ անդամին աշխատանքից հեռացնելու մասին գտնի սխալ, այդ դեպքում հեռացված անդամը վերականգնում է աշխատանքում, վճարելով նրան փոխհատուցում հարկադրված զրկանքների օրերի համար, բայց վոչ ավելի 20 օրից

Հոդված 19.— Ընդհանուր ժողովի վորոշումն արտելի անդամին արտելից վտարելու մասին կարող են բողոքարկվել համապատասխան Հաշվկոոպմիությանը կից կոնֆլիկտային հանձնաժողովում, վորի վճիռը վերջնական է և պարտադիր արտելի համար։

Հաշվկոոպմիությանը կից կոնֆլիկտային հանձնաժողովի վճիռը հսկողության կարգով կարող է բողոքարկվել Սոցիալական ապահովության ժողկոմատում։ Հաշվկոոպմիությանը կից կոնֆլիկտային հանձնաժողովն արտելի անդամին արտելից վտարելու հարցը քննում է և վճռում անպայմանորեն արտելի վարչության նախագահի և դանդատավորի ներկայությամբ։

Յերբ արտելից վտարված անդամը կոնֆլիկտային հանձնաժողովի կամ Սոցիալական ապահովության ժողկոմատի կողմից վերականգնվում է իր իրավունքներում, արտելը հաշիվ է

տեսնում և վճարում նրան հարկադրական գործալքումի օրերի համար համաձայն հաշվկոոպ միության կոնֆլիկտային հանձնաժողովի վճռի, բայց ոչ ավելի 20 օրից։

Հարկադրական պարապուրդի փոխհատուցումը հաշվում է յելնելով վերականգնված արտելի անդամի վերջին ամսվա միջին ամսական աշխատավարձից։

Հոդված 20.— Արտելից դուրս գալիս արտելի յուրաքանչյուր անդամ պարտավոր է այդ մասին նախազգուշացնել վարչությանը գրավոր կերպով, դուրս գալուց մեկ ամիս առաջ։

Հոդված 21.— Արտելից դուրս յեկած կամ հեռացված անդամները պատասխանատու յեն արտելի հանձն առած պարտականությունների հանդեպ, արտելում յեղած իրենց փայավճարներով մինչև տարվա վերջը, որի ընթացքում նրանք հեռացվել են։

Հոդված 22.— Արտելից դուրս յեկած կամ հեռացված անդամներին կամ նրանց իրավահաջորդներին վերադարձվում են փայավճարները և այլ վերադարձնելի մուծումները, դուրս յեկած նրանց վրա ընկնող արտելի վնասների մասը։

Այդ վճարումներն ու մուծումները վերադարձվում են տվյալ տարվա տարեկան հաշվետվության ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո մեկ ամսվա ընթացքում։

Ժամկետից շուտ արտելից դուրս յեկած անդամի փայավճարը կարող է վերադարձվել միայն վորպես բացառություն, յեթե արտելի ֆինանսական դրությունն կայուն է և ոչ այլ կերպ, յեթե ոչ յուրաքանչյուր առանձին դեպքում Հաշվկոոպմիության թույլտվությամբ։

4. ԱՐՏԵԼԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 22.—Արտելի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի.

ա) ընտրելու և ընտրվելու արտելի վարչության և վերահսկողության մարմինների մեջ։

բ) Պահանջելու համաձայն կանոնադրության (հոդված 40-րդ) վարչության միջոցով արտելի անդամների ընդհանուր ժողով հրավիրել և հարցեր մտցնել ժողովում վճռելու համաձայն կանոնադրության։

գ) Ստանալու ոգուտի մասը, որը հասնում է արտելի անդամին անհատական բաշխմամբ անդամների միջև։

դ) Ստանալու որացուցային տարվա ընթացքում 18 բանվորական օրվա արձակուրդ, իսկ առողջության համար ջնասակար արտադրություններում 24 բան. օրվա արձակուրդ, պահպանելով միջին աշխատավարձը։

Արտելում անընդհատ յերկու տարուց ավելի աշխատող անդամները լրացուցիչ արձակուրդ են

տանում յուրաքանչյուր աշխատած տարվա հաշվար մեկ որ, բայց ընդհանուր առմամբ վոչ ավելի քան 6 որ։

յե) Պարապուրը ապահովագրման ժամանակավոր և մշտական անաշխատունակության դեպքում, ծննդաբերության, նորածին մանկանց կերակրելու, թաղման դեպքերում, այլ և բժշկական սպասարկման ի հաշիվ արտելի։

զ) Զբիաթաբ սովորելու տեխնիկումում և բարձրացնելու իր վորակավորումը։

ե) Զբիաթաբ ոգտվելու կուլտհիմարկներից (ակումբ, կարմիր անկյուն, գրադարան) և սովորելու գեղարվեստական ու այլ կուլտուրական խմբակներում։

Մանրություն.— Նոր ընդունված արտելի անդամները արձակուրդի իրավունք ձեռք են բերում ավյալ արտելում անընդհատ աշխատանքի 11 ամիսը լրացնելուց հետո։

5. ԱՐՏԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 24. Արտելի մեջ մանողը մուտքի վճար ե մուծում իր միջին աշխատավարձի 5%-ի չափով։ Մուտքի վճարը չի վերադարձվում և հատկացվում ե արտելի հիմնական ֆոնդին։

Հոդված 25. Արտելի յուրաքանչյուր անդամը փայավճար և մուծում արտելին, արտելում աշխատելու առաջին տարվա ընթացքում ստացած յերկու ամսվա միջին աշխատավարձի չափով, բայց 500 ռուբլուց վոչ ավելի։ Փայավճարի մուծումը կարող ե արտելի վարչության կողմից տարաժամկետվել վոչ ավելի քան 5 տարվա ընթացքում և գանձվել ամենամսյա աշխատավարձից տոկոսների ձևով։

Առաջին տարվա միջին աշխատավարձի հաշվով յերկամսյա փայավճարը մուծելուց հետո (վոչ ավելի 500 ռուբլի) այլևս մուծումներ չեն կատարվում անկախ հետագայում ավյալ անդամի աշխատավարձի փոփոխություններից։

Հոդված 26. Արտելը կազմում ե հիմնական, փայավճարային և հատուկ ֆոնդեր։ Հիմնական ֆոնդը կազմում ե՝

ա) Մուտքի վճարներից.

բ) Արտելին ձրիաբար հանձնված գույքի արժեքից.

գ) Արտելի ոգուտի բաշխումից ընդհանուր ժողովի վորոշած չափով, բայց վոչ պակաս 40%-ից։

դ) Այլ մուտքերից։

Արտելի հիմնական ֆոնդը նշանակված ե գույք և տարքավորում գնելու և արտելի արտադրական, մատակարարման ու վաճառման գործունեությունը ֆինանսավորելու համար։ Փայավճարային ֆոնդը նշանակված ե բացառապես արտադրական, մատակարարման և վաճառման գործունեությունը ֆինանսավորելու համար և չի

կարող ոգտագործվել կապիտալ ներդրումների համար (գույքի գնում, սարքավորում, շինարարություն և այլն)։

Հատուկ ֆոնդերը կազմվում են հատուկ գոյություն ունեցող որենքների և ընդհանուր ժողովի վորոշմամբ ոգուտի մասհանումներից և այլ մուտքերից ու նշանակված է արտելի հատուկ միջոցառումները ֆինանսավորելու համար (արտելի անդամներին պարգևատրելու ֆոնդ, կուլտֆոնդ, գյուտարարությանը ոժանդակող ֆոնդ, աշխատանքի պաշտպանության ֆոնդ, սոցկենցաղային ֆոնդ, կադրերի պատրաստմանֆոնդ և այլն։

Պարգևատրման ֆոնդը նշանակված է բանվորներից լավագույն ստախանովականներին և հարվածայիններին, այլև վարչական, ճարտարատեխնիկական և սպասարկող անձնակազմին պարգևատրելու համար, նրանց արտադրական նվաճումների առթիվ։

Սոցկենցաղային ֆոնդը նշանակված է արտելի անդամներից լավագույն արտադրողների և նրանց ընտանիքների և առանձնապես նյութական ոգնության կարիքը զգացող արտելի անդամների կենցաղային պայմանները բարելավելու համար։

Հոդված 27.—Ոգուտից պետական հարկերը վճարելուց հետո, գոյացած մնացորդը ընդհանուր ժողովի վորոշմամբ հատկացվում է սույն կանոնադրությամբ սահմանված ֆոնդերը կազմելու և լրացնելու, սխեմայինը ընդհանուր ֆոնդերի և այլ միջոցառումների համար մասհանումները կատարելու նպատակով։

Արտելի անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ մաքուր ոգուտից վոչ ավելի քան 20 %-ը կարող է բաշխվել արտելի անդամների միջև, վորպես հավելյալ վարձատրություն համեմատ նրանց աշխատանքի չափի ու վորակի։

Հոդված 28.—Արտելի կրած ծախսերը գանձվում են նրանց պատճառ հանդիսացող պատասխանատու անձերից։ Պատասխանատու անձերից ծախսերը գանձելուց հետո, տարեկան հաշվետվությամբ գոյացած ծախսերը արտելի անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ, կամ բաժանվում են արտելի անդամների վրա համեմատական չափով ըստ նրանց ունեցած տարվա աշխատավարձի, կամ թողնվում են բալանսում հետևյալ տարվա ոգուտից ծածկելու համար։ Արտելի անդամների վրա բաժանված ծախսը առաջին հերթին ծածկվում է անդամների փայավճարներից, վորոնք հետագայում լրացվելու յեն անդամների կողմից մինչև սահմանված չափը։ Փայավճարները չբավականացնելու դեպքում վնասի մնացած մասը ծածկվում է անդամների աշխատավարձից ընդհանուր ժողովի վորոշած չափով պահումները կատարելով։

Արտելից հեռացած անձերից (Հոդ. 21-րդ) վնասը պահվում է նրանց փայավճարից, անկախ ընդհանուր ժողովի վորոշումից ջնասը անդամների վրա բաժանելու մասին։

Այն դեպքում, յերբ ջնասը ստացվել է արտելի անդամներից անմեղ պատճառներով (տարեբային արհավիրքների հետեվանքով) ջնասը կարող է Հաշկոոպմիության Թույլտվությամբ ծածկվել արտելի հիմնական ֆոնդի հաշվին։

Բալանսում թողված և հետեյալ տարվա չծածկված ջնասը, տարին անցնելուց հետո դուրս է գրվում բալանսից իհաշիվ փայավճարային ֆոնդի, վորպիսին հետագայում լրացվելու յե մինչև սահմանված չափը։ Յեթե փայավճարային ֆոնդը չի բավականացնում, այդ դեպքում, ջնասի մնացած մասը ծածկվում է իհաշիվ արտելի հիմնական ֆոնդի։

Հոդված 29.—Արտելի վարչությունը կարող է արտելի միջոցները ծախսել միմիայն արտելի անդամների ընդհանուր ժողովի կողմից հաստատված նախահաշվով, վարչության կողմից ինքնագլուխ կերպով միջոցները-ծախսի նախահաշվից մի հոդվածից մյուս հոդվածը տեղափոխելն արգելվում է, միջոցները հոդվածից-հոդված փոխադրելու համար, վարչությունը պարտավոր է ընդհանուր ժողովի թույլտվությունը ստանալու։

Հոդված 30.—Արտելի դրամական ազատ

միջոցները պահվում են Գետբանկի տեղական բաժանմունքում արտելի անվամբ բացված հաշվում և կարող է մուծվել միության յերկարատև վարկավորման ֆոնդը վորպես ավանդ։

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, ՎԱՐՁԱՏՐՈՒՄ ՅԵՎ ԿԱՐԳԱՊԱՇՈՒԹՅՈՒՆ

Հոդված 31.— Արտելում վողջ գործը կատարվում է անդամների անձնական աշխատանքով, համաձայն ընդհանուր ժողովի ընդունված ներքին կարգապահության կանոնների։ Արտելի անդամներից վոչ վոք իրավունք չունի հրաժարվելու հանձնարարված աշխատանքից առանց հարգելի պատճառների։

Արտելի այն անդամները, վորոնք զինվորական ծառայության կոչվելու կամ խորհրդային, կուսակցության և կամ այլ հասարակական (նույն թվում և կոոպերատիվ) հիմնարկներում և կազմակերպություններում ընտրվի պաշտոն կատարելու, արտելի կամ հաշմկոոպմիության կողմից գործուղման և կամ ուսման ուղարկվելու հետևանքով ժամանակավորապես դադարեցրել են իրենց աշխատանքն արտելում, իրավունք ունեն մնալ արտելում վորպես անդամ ամբողջ այն ժամանակամիջոցում, քանի նա կատարում է նշված պաշտոնական պարտականությունները կամ գտնվում է ուսման մեջ։ Արտելում վարձու

աշխատանքը թույլատրվում է միայն հատուկ գիտություն պահանջող կամ հաշմանդամների ուժից վեր աշխատանք կատարելու համար։

Արտելում վարձու աշխատանք կատարողների ընդհանուր թիվն արտելի անդամների ընդհանուր թվի 20 տոկոսից բարձր չպիտի լինի։

Գյուղատնտեսական ձեռնարկություններ ունեցող արտելում թույլատրվում է սեզոնային աշխատանքների ժամանակ վարձու աշխատավորներ ունենալ արտելի անդամների ընդհանուր թվի 40 տոկոսի չափով։

Կույրերի արտելներում թույլատրվում է վարձու աշխատողներ ունենալ անդամների ընդհանուր թվի 50 տոկոսի չափով։ Խառը արտելում վարձու աշխատավորների սահմանային չափը հաշվում են արտելի կույր անդամների թվի նկատմամբ (50 տոկոս) առանձին և տեսունակ անդամների նկատմամբ (20 տոկոս) առանձին։

Այն աշխատունակ անձինք, վորոնք ընտրված են արտելում ղեկավարող աշխատանք տանելու համար հատուկ կանոնադրության 12-րդ հոդվածի «թ» կետի չեն մտնում արտելի վարձու աշխատավորների թվի մեջ։

Հոդված 32.— Արտելը կարող է ստեղծել առանձին արտադրական արհեստանոցներ (կայաններ), ցեխեր և բրիգադներ, վորոնք աշխա-

տում են տնտեսավարման սկզբունքներով և վորոնց աշխատանքի արդյունքները հաշվի չեն առնվում առանձին։

Հոդված 33.— Արտելի վարչությունը մի վորոշ անձի չի հանձնում արտելի արտադրական գործունեության ղեկավարությունը միանձնյա ղեկավարության սկզբունքներով, վորը հետագայում հաշվետու չի արտելի վարչության և ընդհանուր ժողովի առջև։ Արտադրության կառավարողի առաջարկով վարչությունը հաստատում է արհեստանոցների վարիչներին, ցեխերի պետերին և բրիգադավարներին։ Այդ անձանց իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են արտելի անդամների ընդհանուր ժողովի կողմից հաստատված կանոններով։

Հոդված 34.— Արտելի անդամների աշխատանքը վարձատրվում է անսահման պրոգրեսիվ կամ ուղղակի գործարքային սկզբունքներով։

Ղեկավարող և ճարտարատեխնիկական աշխատողների համար սահմանվում է աշխատանքի խրախուսիչ վարձատրություն, վորպիսին նպատակում է պլանների գերակատարմանը, արտադրանքի վորակի բարձրացմանը և գործվածքների ինքնարժեքի իջեցմանը։

Արտելի վարչությունը մշակում է արտադրանքի նորմաներն աշխատանքի բոլոր տեսակների համար, լիակատար չափով ոգտագործելով

տարքավորման կարողությունը և արտելային ձեռնարկությունների բոլոր ռեզերվները, հաշվի առնելով լավագույն ստախանովականների նվաճումները, այլ և մշակում է գնացուցակներ, որոնք հաստատվում են արտելի անդամների ընդհանուր ժողովի և Հաշվկոոպմիության կողմից։ Այդ նորմաներն ու գնացուցակները հասցրվում են ի գիտություն արտելի բոլոր անդամներին, փակցնելով բոլոր արհեստանոցներում և ցեխերում աչքի ընկնող տեղում։

Խոտանի և պարապուրդի վարձատրությունը կատարվում է համաձայն գործող ռեժիմության։

Հոդված 35.— Արտելի անդամների աշխատանքի կարգավորումը, ընդհանուր արհեստանոցներում աշխատելու ժամերը, աշխատանք կատարելու կարգը, տանը կատարելու համար աշխատանք կատարելու կարգը, անդամների հետ հաշիվ տեսնելու հարցը, արձակուրդների հարցը, աշխատանքային կարգապահությունը խախտելու համար նշանակվող տույժը և այլն, սահմանվում են արտելի անդամների ընդհանուր ժողովի կողմից հաստատված ներքին կարգապահության կանոններով, որոնք փակցվում են բոլոր արհեստանոցներում և ցեխերում աչքի ընկնող տեղերում։

Արտելի Նախագահի, նրա տեղակալի, վար-

չության անդամների, որոնք մշտական պարտականություններ են կատարում վարչությունում, այլ և արտելի այն անդամների աշխատավարձը, որոնք արտելում ղեկավարող և պատասխանատու ճարտարատեխնիկական աշխատանք են կատարում, սահմանվում են արտելի ընդհանուր ժողովի կողմից։

Հոդված 36.— Արտելի բոլոր անդամները պարտավորվում են խիստ պահպանել արտելային սեփականությունը, արտադրության գործիքները, պատրաստի արտադրանքը, աշխատել ազնվորեն, պայքարել արտելի արդիականի կատարման, արտադրանքի վրակի լավացման և խոտանի լիակատար վերացման համար, յենթարկվել կանոնադրության պահանջներին, ընդհանուր ժողովի և արտելի վարչության որոշումներին, պահպանել ներքին կարգապահության կանոնները, ճշտությամբ կատարել վարչության, արտադրության կառավարչի, ցեխի և բրիգադայի վարիչների հանձնարարած աշխատանքները, կատարել հասարակական պարտականությունները, խիստ պահպանել աշխատանքի կարգապահությունը։

Հոդված. 37.— Հանդեպ հասարակական գույքի անտնտեսավար ու անխնամ վերաբերմունք ցուցաբերելու դեպքում, առանց հարգելի պատճառների հանձնարարված աշխատանքը կատա-

բելուց հրաժարվելու, անվորակ աշխատանքի և աշխատանքային կարգապահության ու կանոնադրության խախտումների համար համաձայն արտելի ներքին կարգապահության կանոնների, հանցավորները տույժի յենթարկվում և բացի այդ պարտավոր են արտելին հասցրած վնասը հատուցել։ Մասնավորապես հանցավորի վրա կարող է վորպես տույժ նշանակվել, պարտականության անվորակ աշխատանքը վերափոխել ձրիաբար, նախազգուշացում անել, նկատողություն անել, ընդհանուր ժողովում հանդիմանել, փոխադրել ցածր աշխատանքի, ժամանակավորապես հեռացնել աշխատանքից

Այդ դեպքում, յերբ արտելի ձեռնարկած դատաիրավական և պատժողական միջոցառումներին անդոր հանդիսանան արտելի անուղղելի անդամների նկատմամբ, վարչությունը արտելի ընդհանուր ժողովում հարց է բարձրացնում նրման անդամին արտելից վտարելու մասին։

Արտելի այն անդամը, վորն անհարգելի պատճառով աշխատանքից ուշացել է վոչ ավելի 20 րոպեյից կամ ձեռնարկությունից դուրս է յեկել ժամանակից շուտ և կամ աշխատանքի ժամերին անգործության է մատնվել, յենթարկվում է վարչական տույժի—զգուշացում կամ նկատողություն, մինչև 3 ամիս ժամանակով ցածր վարձատրվող աշխատանքի փոխադրում։

Մեկ ամսվա ընթացքում 3 այդպիսի, կամ շարունակ 2 ամսվա ընթացքում 4 այդպիսի խախտումներ կատարած արտելի անդամը կամ թեկուզ և մեկ անգամ 20 րոպեյից ավելի ուշացողը, յենթարկվում է տույժ-խիստ նկատողություն՝ նախազգուշացումով, կամ զրկվում է ոգուտներից բաժին ստանալու կամ լրացուցիչ 6 որյա արձակուրդ (բացի 12 աշխատանքային որից) ստանալու իրավունքից։

Ուշացումները կրկնվելու դեպքում (անկախ նրա տեվողությունից) արտելի անդամը անմիջապես հեռացվում է աշխատանքից, վորպես չարանենդ գործալիք և հեռացվում է նաև արտելից։

Հոդված 38.—Վատնումները, հափշտակումները և հանդեպ արտելի գույքը ջնասարք վերաբերմունքը դիտվում են վորպես հասարակական սեփականության հափշտակում։ Այդպիսի հանցավոր գործունեությունների մեջ մեղավոր անձանց մասին հայտնվում է դատական մարմիններին նրանց քրեական պատասխանատվության յենթարկելու, բանվորագյուղացիական պետության որենքների վողջ խստությամբ։

7. ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հոդված 39.—Արտելի գործերը կառավարում է ընդհանուր ժողովը, իսկ ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակամիջոցում նրա ընտրած

վարչությունը։ Այդ արտելներում, վորոնցում անդամների թիվը 25-ից բարձր չեն գործերի կառավարումը հանձնարարվում է վարչության փոխարեն մեկ անձի՝ վարչության նախագահին։

Հոդված 40.—Արտելի ընդհանուր ժողովը հանդիսանում է արտելի կառավարչական բարձրագույն մարմինը։

Ընդհանուր ժողովը ա) ընտրում է արտելի վարչություն, այլև վերստուգիչ հանձնաժողով, ըստ վորում վերստուգիչ հանձնաժողովը հաստատվում է Հաշմկոոպմիության կողմից։

բ) Կատարում է արտելի նոր անդամների ընդունելություն և անարժանների արձակում։

գ) Հաստատում է արտելի տարեկան արտադրական պլանը, մտից և ելից նախահաշիվը, շինարարության պլանը, արտադրանքի նորմաներն ու աշխատանքների գնացուցակը։

դ) Վորոշում է արտելի նախագահի, վարչության ազատ անդամների աշխատավարձի չափը, այլև արտելի այն անդամների աշխատավարձը, վորոնք արտելում պատասխանատու հարտարատեխնիկական աշխատանք են կատարում։

ե) Հաստատում է արտելի գործունեության մասին վարչության և վերստուգիչ հանձնաժողովի տարեկան հաշվետվությունը։

զ) Հաստատում է զանազան ֆոնդերի կազմումը, անդամների մուտքի և փայավճարների տարաժամկետման կարգը։

է) Վորոշում է ոգուտի բաշխման ու ֆոնդերը ծածկելու կարգը։

ը) Հաստատում է արտելի ներքին կարգապահության կանոնները։

թ) Վճռում է արտելը մեկ այլ արտելի հետ միացնելու, բաժանելու, լուծարքի յենթարկելու հարցերը։

ժ) Ընդունում է արտելի կանոնադրությունը, փոխում կամ լրացնում է այն։

Այս հոդվածում թված բոլոր հարցերով վարչության վորոշումը, առանց ընդհանուր ժողովի հաստատման, ապորինի յե և ուժի մեջ չի կարող մտնել։

Ընդհանուր ժողովը որինական է համարվում, յեթե ներկա յեն արտելի անդամների ընդհանուր թվի կեսից վոչ պակաս թվով բոլոր դեպքերում՝ բացառությամբ այն դեպքերի, յերբ ընդհանուր ժողովում վճռվում են վարչության (նախագահ) ընտրության, արտելի կողմից այս կամ այն անդամին վտարելու, զանազան ֆոնդեր կազմելու և նրանց չափը վորոշելու, կանոնադրությունը հաստատելու, փոփոխելու կամ լրացնելու, արտելն ուրիշ արտելի հետ միացնելու, բաժանելու և լուծարքի յենթարկելու հարցերը,— վորոնց համար պահանջվում է ար-

տելի անդամների ընդհանուր թվի 2/3-ի ներկայությունը։

Ընդհանուր ժողովի վորոշումներն ընդունվում են ձայների բացարձակ մեծամասնությամբ, մացրվում են արձանագրության մեջ, ստորագրվում ժողովի նախագահի և քարտուղարի կողմից։

Արտելի նախագահի, վարչության անդամների և վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունները կատարվում են գաղտնի քվեարկությամբ։

Ընդհանուր ժողովը հրավիրվում է վարչության կողմից յուրաքանչյուր յեռամսյակում քննելու վարչության հաշվետվությունն արտելի յեռամսյա գործունեության մասին և տարեկան հաշվետվությունն անցած գործունեության մասին և առաջիկա տարվա պլանն ու նախահաշիվը հաստատելու համար։

Բացի այդ ընդհանուր ժողովը հրավիրվում է վարչության կողմից ըստ կարիքի, բայց վոչ պակաս քան 2 ամիսը մեկ անգամ, այլ և նա հրավիրվում է վերստուգիչ հանձնաժողովի կամ անդամների ընդհանուր թվի 1/5-ի պահանջով ու Հաշվկոոպմիության պահանջով։

Հոդված 41.— Արտելի անդամների ընդհանուր ժողովը 2 տարի ժամանակով ընտրում է 3—7 հոգուց բաղկացած վարչություն և 3—5 հոգուց բաղկացած վերստուգիչ հանձնաժողով։ Արտելի վարչությունը հանդիսանում է արտելի գործադիր մարմինը և պատասխանատու յե ընդհանուր ժողովի առջև արտելի աշխատանքի համար և պետության հանդեպ պարտականությունների կատարման համար։ Վարչությունը վարում է արտելի բոլոր գործերը, կազմակերպում է ապարատը, տանում է ոպերատիվ աշխատանք, կնքում է պայմանագիրը մատակարարման ու վաճառման մասին և այլն։

Նորընտիր վարչությունը պարտավոր է նախկին վարչությունից արտելի գործերն ընդունել ստացող հանձնողական ցուցակով, վորպիսին կազմվում է վերստուգիչ հանձնաժողովի մասնակցությամբ գույքի, կայքի, փաստաթղթերի արժեքների և գործերի փաստացի ստուգման հիման վրա։

Արտելի նախագահ և վարչության անդամներ կարող են լինել միայն արտելի անդամները։ Արտելը կարող է արտելի նախագահ և վարչության անդամներ ընտրել վոչ արտելի անդամներից, սակայն այն պայմանով, վոր այդ անձինք 15 որվա ընթացքում անդամագրվեն արտելում։

Հոդված 42.— Արտելի ամենորյա աշխատանքը ղեկավարելու, այլ և վարչության վորոշումների ամենորյա կատարումը ստուգելու հա-

մար ընդհանուր ժողովը ընտրում է արտելի նախագահ, որը միևնույն ժամանակ հանդիսանում է նաև վարչության նախագահ։ Նախագահը պարտավոր է վարչության ժողով հրավիրել առնվազն ամիսը 2 անգամ ընթացիկ հարցերը քննելու և համապատասխան որոշումներ կայացնելու համար։ Վարչությունը կարող է նախագահին ազնելու համար վարչության անդամներից նախագահի տեղակալ ընտրել։

Հոդված 43.—Հաշվապահություն վարելու և դույքի հաշվառումն տանելու համար վարչությունը հրավիրում է արտելի անդամներից կամ դրսից վարձու հաշվապահ, որը պատասխանատու չէ միջոցների ճիշտ ծախսելու և ֆինանսական կարգապահությունը պահպանելու համար։ Հաշվապահը վարում է հաշիվները ու հաշվառումը սահմանված ձևերով և ամբողջովին յենթարկվում է վարչությանն ու նրա նախագահին։

Բոլոր ծախսերն ու դրամական փոխանցումները, չեկերն ու դրամական միջոցները փոխանցումները ստանալու վերաբերյալ լիազորագրերը ստորագրում են նախագահը կամ նրա տեղակալը և հաշվապահը։ Հաշվապահը վոչ մի իրավունք չունի արտելի միջոցների վրա կարգադրություններ անելու և ավանները դուրս գրելու։ Այդ իրավունքը վերապահված է միայն վարչությանն ու նրա նախագահին։ Արտելի վարչությունը

պարտավոր է տարեկան հաշվետվությունն ու բալանսը ներկայացնելու հաշվկոոպմիությանը միաժամանակ ներկայացնելով ֆինբաժնին։

Հոդված 44.—Գրագրությունները կատարվում են նախագահի կամ նրա տեղակալի ստորագրությամբ։

Պայմանագիրը, այլ պարտականություններն ու լիազորագրերը, ստորագրվում են նախագահի կամ նրա տեղակալի և վարչության անդամներից մեկն ու մեկի կողմից, նախագահի և տեղակալի բացակայության դեպքում ստորագրվում են վարչության յերկու անդամների կողմից կամ վարչության հավատարմագրով լիազորագրված անձի կողմից։

Այն արտելներում, որոնցում միայն նախագահն է—(Հոդ. 39-րդ) պայմանագրերը, պարտավորությունները և լիազորագրերը ստորագրում է միայն նախագահը։

Հոդված 45.—Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է վարչության տնտեսական ու ֆինանսական վոչ գործունեությանը, ստուգում է ճշտությամբ են արդյոք մուտք յեղած բոլոր դրամական և նյութական մուտքերը, պահպանվում է արդյոք կանոնադրությամբ նախատեսված միջոցների ծախսման կարգը, արդյոք բավականաչափ խնայքով է պահպանվում արտելի դույքը, չկան արդյոք դույքի և միջոցների

հաշվետվություններ և վճռություններ, ինչպես և արտեալը հաշիվները ժաքրում իր պարտավորություններով պետության հանդեպ, ինչպես և վճարում իր պարտքերը և ինչպես և գանձում հասանելիքներն իր պարտապաններից, պահպանվում են արդյոք կանոնադրությունը և վերադաս կազմակերպությունների դիրեկտիվները, ճիշտ և արդյոք կատարվում անդամների ընդունելությունն ու վտարումը։

Վերստուգիչ հանձնաժողովը քննում է նաև արտելի առանձին անդամների տված բողոքները վարչության այս կամ այն անկանոն աշխատանքների մասին։

Դրա հետ միասին վերստուգիչ հանձնաժողովը ժանրակրկիտ կերպով ստուգում է արտելի անդամների հաշիվները, հայտնաբերում է պակաս հաշվելու, անժամանակ հաշիվ տեսնելու, արտելի ու անդամների շահերի խախտման այլ դեպքեր։

Վերստուգիչ հանձնաժողովը վերստուգում է կատարում ամեն յեռամսյակում, իսկ դրամարկղը ստուգում է ամեն ամիս։ Վարչության յեռամսյա ու տարեկան հաշվետվությունների մասին տալիս է իր յեզրակացությունը, վորպես ին լսվում է ընդհանուր ժողովում, վարչության հաշվետվությունները լսելուց անմիջապես հետո։ Վերստուգիչ հանձնաժողովի արձանագրությունը հաստատվում է ընդհանուր ժողովի կողմից,

վերստուգիչ հանձնաժողովն իր գործունեության համար հաշվետու չե արտելի անդամների ընդհանուր ժողովի առաջ։

8. ԱՐՏԵԼԻ ԼՈՒԾԱՐՔԸ

Հոդված 46. Արտելի բաժանումը կամ մասնցումը մեկ ուրիշ արտելի հետ կարող է տեղի ունենալ միայն անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ, որենքով նախատեսված դեպքում։

Հոդված 47.—Արտելի լուծարքը կատարելու համար ժողովը ընտրում է լուծարքային հանձնաժողով (լիկվիդկոմ), իսկ յերբ արտելը լուծարքի չե յենթարկվում խորհրդային իշխանության մարմինների վորոշմամբ, լուծարքային հանձնաժողովը նշանակվում է հաշվկոոպմիության կողմից։

Լուծարքը կատարվում է որենքով սահմանված կարգով։ Արտելի պարտքերը վճարելուց և անդամների փայավճարները վերադարձնելուց հետո, արտելի գույքի մնացորդը հանձնվում է հաշվկոոպմիությանը, վորի անդամն և հանդիսանում տվյալ արտելը։

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ

1.

2.

3.

4.

5.

6.

7.

Իսկական հեռ ճիշտ է. կազմբաժվար՝

Փ. Հարությունյան

ՀՀ Ազգային գրադարան
NL0197832

541

ԳԻՆԸ 65 ԿՈՊ.